[280122]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«29» մարտի 2017թ. N 175-Ա/1

«ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՍՏԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N 1821-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության հավելվածի 12-րդ կետի «դ» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1078-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 22-րդ կետի պահանջները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017 թվականի փետրվարի 16-ի N 30-Ա/1 հրամանի համաձայն ստեղծված հանձնաժողովի կողմից 2017 թ. դեկտեմբերի 19-ին տրամադրված՝ «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2017 թվականի ապրիլի 12-ին Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1078-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ բաժնով նախատեսված հայտին կից փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հավաստագրել «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության

կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1078-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության՝ տարեց և (կամ) 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող անձանց խնամքը տնային պայմաններում, «բ» պարբերության՝ բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատությունում, «դ» պարբերության՝ սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնում:

2. Հանձնաժողովին՝ ապահովել սույն հրամանը եռօրյա ժամկետում կազմակերպությանն առձեռն հանձնելը կամ փոստային կապի միջոցով կազմակերպության տրամադրած հասցեով ուղարկելը:

Ա. ԱՍԱՏՐՅԱՆ